



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2026 թվականի թիվ 2043-Ա

ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ**.

1. Սևան համայնքի 2026 թվականի բյուջեի «Սոցիալական հատուկ արտոնություններ» հաշվից /բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729 / փոխանցել 146.000 դրամ «ՎԱՐՄԷՔՍ» ՍՊԸ-ին՝ էլեկտրական մարտկոց ձեռք բերելու և Սևան համայնքի բնակիչ Արտեմ Խաչատրյանին տրամադրելու համար:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 11
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2026 թվականի թիվ 2044-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի N 95-Ա,
2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 464-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ՈՒԺԸ
ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հունվարի 20-ի «Հասցե տրամադրելու և բաժնային սեփականություն սահմանելու մասին» N 95-Ա, 2026 թվականի մարտի 5-ի «Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հունվարի 20-ի N 95-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» N 464-Ա որոշումները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 11
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2026 թվականի թիվ 2045-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 20-Ի
N 94-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝
որոշում եմ.

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հունվարի 20-ի «Բաժնային սեփականություն սահմանելու մասին» N 94-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 11
ք. Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2026 թվականի թիվ 2046-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԾԱՅԻՆ ԶԱՓԵՐԻ ԵՎ ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ ԵՎ ՄԱԿԵՐԵՍԻ ՈՒՂՂՄԱՆ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն, ՀՀ կառավարության՝ 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն և 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշումներով, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14³ հոդվածով, հիմք ընդունելով «Այրի Բանկ» ՓԲԸ-ի ներկայացուցիչ Ներսես Մովսեսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «Այրի Բանկ» ՓԲԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 12, 1 հասցեում գտնվող վարչական շենքի համար նոր հասցե տրամադրելու, անշարժ գույքի գծային չափերը, երկրաչափական պատկերը, մակերեսը ուղղելու և բաժնեմաս սահմանելու մասին, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով «Այրի Բանկ» ՓԲԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 12, 1 հասցեում գտնվող վարչական շենքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 50 վարչական շենք հասցե:
2. Ուղղել և հաստատել Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 50 վարչական շենք հասցեում գտնվող անշարժ գույքի գծային չափերը, տեղադիրքը, երկրաչափական պատկերը և մակերեսը:
3. «Այրի Բանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 50 հասցեում գտնվող անշարժ գույքի գրաղեցրած 304.80քմ մակերեսով հողատարածքում՝ «Այրի Բանկ» ՓԲԸ-ին սեփականության իրավունքով պատկանող 157.81քմ մակերեսով վարչական շենքի, որից՝ 20.25 քմ ընդհանուր օգտագործման իրավունքով, գրաղեցրած հողատարածքի նկատմամբ սահմանել բաժնային սեփականություն՝ 227.28 / 385.09 բաժնեմասով:
4. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 11
ք.Սևան



2223



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2026 թվականի թիվ 2047-Ա

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳԾԱՅԻՆ ՉԱՓԵՐԻ ԵՎ ԵՐԿՐԱԶԱՓԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԻ, ՄԱԿԵՐԵՍԻ ՈՒՂՄԱՆ ԵՎ ԲԱԺՆԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 2021 թվականի ապրիլի 29-ի N 698-Ն, ՀՀ կառավարության՝ 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն և «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, հիմք ընդունելով «Մանկական զբոսայգի» ՍՊԸ-ի տնօրեն Մայիս Սարգսյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «Մանկական զբոսայգի» ՍՊԸ-ին պատկանող, Գեղարքունիքի մարզ, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 12 / 1 հասցեում գտնվող անշարժ գույքի գծային չափերը, երկրաչափական պատկերը, մակերեսը ուղղելու և բաժնեմաս սահմանելու մասին, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ որոշում եմ.

1. Ուղղել և հաստատել Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 12 / 1 վարչական շենք հասցեում գտնվող անշարժ գույքի գծային չափերը, տեղադիրքը, երկրաչափական պատկերը և մակերեսը:
2. «Մանկական զբոսայգի» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 12 / 1 հասցեում գտնվող անշարժ գույքի զբաղեցրած 304.80քմ մակերեսով հողատարածքում «Մանկական զբոսայգի» ՍՊԸ-ին սեփականության իրավունքով պատկանող, 227.28 քմ մակերեսով վարչական շենքի, որից՝ 20.25քմ՝ ընդհանուր օգտագործման իրավունքով, զբաղեցրած հողատարածքի նկատմամբ սահմանել բաժնային սեփականություն՝ 157.81 / 385.09 բաժնեմասով:
3. Բաժնային սեփականություն հանդիսացող 304.80 քմ մակերեսով հողատարածքում կառուցված՝ Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովայի փողոց թիվ 12 / 1 հասցեում գտնվող 11.81 քմ մակերեսով շինությունը ճանաչել ինքնակամ:
4. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 11
ք. Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2026 թվականի թիվ 2048-Ա

ՔԱՂԱՔԱՑԻ ԱՐՏՅՈՄ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով քաղաքացի Արտյոմ Հարությունյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի. համաձայն ՀՀ ՇՄՆ Էկոպարեկային ծառայության կողմից կազմված N 040226108 արձանագրության՝ կառուցապատման իրավունքով Արտյոմ Հարությունյանին պատկանող հողատարածքում առկա են ինքնական շինություններ՝ փայտյա տնակ, դրան կից՝ անավարտ փայտյա շինություն: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում Արտյոմ Հարությունյանը սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով: Հարուցված վարույթի նյութերը մանրամասն ուսումնասիրելու և իրավախախտի պարզաբանումները ստանալու նպատակով 09.07.2026թվականին Սևան համայնքի ղեկավարը վարչական վարույթը կասեցրել է: Սևանի համայնքապետարանի աշխատակազմի ՔՀ բաժնի կողմից 2026թվականի հուլիսի 27-ին տրված տեղեկանքով հիմնավորվում է, որ Արտյոմ Կառլենի Հարությունյանին սահմանված կարգով Սևանի համայնքապետարանի կողմից չի տրվել ճարտարապետա-հատակագծային առաջադրանք և շինարարության թույլտվություն: Իրավախախտ անձից ի վերջո հնարավոր չեղավ ստանալ պարզաբանումներ և բացատրություններ: Հիմնավորված է այն փաստը, որ Արտյոմ Հարությունյանը խախտել է ՀՀ կառավարության 2001 թվականի սեպտեմբերի 24-ի N 896-Ն, 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշումների, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 6-րդ և 23-րդ հոդվածի պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության, ինքնական կառուցել կամ տեղադրել է շինություններ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունները տեղադրվել են պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող, պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների՝ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնական կառուցված շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-

րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի 154-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Քաղաքացի Արտյոմ Կառլենի Հարությունյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:
2. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի Քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել՝ կառուցապատման իրավունքով Արտյոմ Հարությունյանին տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները:
3. Առաջարկել ՆԳՆ ՀՈԳՎ Ոստիկանության Սևանի բաժնին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
4. Սույն որոշման 1-ին կետի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված դատական կարգով:
5. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 11
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

11 օգոստոսի 2026 թվականի թիվ 2049-Ա

«ՏԻԳՐԱՆ-ՎԱԿԵ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ ՎԱԼԵՐԻ ԺԱՄՀԱՐՅԱՆԻՆ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱՍԻՆ

Քննելով «Տիգրան և Վահե» ՍՊԸ-ի տնօրեն Վալերի Ժամհարյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթի նյութերը՝ պարզեցի. համաձայն ՀՀ ՇՄՆ Էկոպարեկային ծառայության կողմից կազմված N 040226112 արձանագրության՝ «Տիգրան և Վահե» ՍՊԸ-ի և «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի հետ 21.01.2008 թվականին կնքված հողամասի կառուցապատման իրավունքի N 1031/126 պայմանագրով ՍՊԸ-ին պատկանող հողատարածքում հայտնաբերվել են ինքնակամ կատարվող շինարարական աշխատանքներ՝ նախկինում կառուցված շենքը տանիքապատվել է, իրականացվել են շենքի երեսպատման աշխատանքներ, ինչպես նաև իրականացվում են ներքին հարդարման շինարարական աշխատանքներ: Հարուցված վարչական վարույթի շրջանակներում «Տիգրան և Վահե» ՍՊԸ-ի տնօրեն Վալերի Ժամհարյանը սահմանված կարգով ծանուցվել է, սակայն չի ներկայացել Սևանի համայնքապետարան լսումներին մասնակցելու և պարզաբանումներ տալու նպատակով: Հարուցված վարույթի նյութերը մանրամասն ուսումնասիրելու նպատակով 23.07.2026 թվականին Սևան համայնքի ղեկավարը վարույթը կասեցրել է: Փաստի կապակցությամբ Սևանի համայնքապետարանի տեղազննող հանձնախումբը տարածքում իրականացրել է տեղազննման աշխատանքներ և հաստատել է ինքնակամ շինարարական աշխատանքների առկայությունը: 2026 թվականի հուլիսի 29-ին ծանուցում է ուղարկվել ՍՊԸ-ի տնօրենին վարչական գործի քննությանը մասնակցելու նպատակով: Ծանուցագիրը ստացվել է ՍՊԸ-ի տնօրենի կողմից, սակայն սահմանված ժամկետում նա չի ներկայացել վարչական գործի քննությանը: Անհրաժեշտ է նշել, որ «Տիգրան և Վահե» ՍՊԸ-ի տնօրենի նկատմամբ դեռևս 2026 թվականի հունվարի 19-ին Սևան համայնքի ղեկավարի 92-Ա որոշմամբ նշանակվել է վարչական տուգանք: ՍՊԸ-ի տնօրենին հանձնարարվել է տարածքի կառավարումն իրականացնել ՀՀ քաղաքաշինական օրենսդրության պահանջներին համապատասխան: Դա ենթադրում է իրականացված շինարարության ապամոնտաժում և սահմանված փասթաթղթերի առկայության պայմաններում նոր շինարարական աշխատանքների իրականացում: Հիմնավորված է համարվում այն փաստը, որ «Տիգրան և Վահե» ՍՊԸ-ի տնօրենը ինքնակամ շինարարական աշխատանքներն իրականացրել է վարչական տուգանք նշանակելուց հետո, որը համարվում է վարչական իրավախախտում ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ կետի պահանջների խախտում: Հիմնավորված է նաև այն փաստը, որ ՍՊԸ-ի տնօրենը խախտել է ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N596-Ն որոշման, ՀՀ «Քաղաքաշինության մասին» օրենքի 6-րդ և 23-րդ

հողվածների պահանջները, առանց օրենքով սահմանված քաղաքաշինական փաստաթղթերի, առանց շինարարության թույլտվության իրականացվել ինքնակամ կառույցի շինարարական աշխատանքներ: Օրենքով սահմանված կարգով հարուցված վարույթի շրջանակում հիմնավորված է համարվել նաև այն փաստը, որ տվյալ շինությունը կառուցվել է պետական սեփականություն հանդիսացող, ««Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ին մշտական և անհատույց օգտագործման իրավունքով պատկանող հողատարածքում: Այդ հողատարածքները հանդիսանում են ՀՀ «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող պետական սեփականության հողատարածքներ: Համաձայն ՀՀ «Քաղաքացիական օրենսգրքի» 188-րդ հոդվածի պահանջների, «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածին պատկանող հողատարածքներում ինքնակամ շինություններն օրինականացման ենթակա չեն և պետք է ապամոնտաժվեն: Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 42-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով, ինչպես նաև ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, ՀՀ «Հողային օրենսգրքի» 43-րդ հոդվածի 2-րդ մասի, 60-րդ հոդվածի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 6 և 23 հոդվածների, 26-րդ հոդվածի ե) կետի, ՀՀ «ՎԻՎ» օրենսգրքի 37-րդ հոդվածի, 154-րդ հոդվածի 4-րդ կետի, ՀՀ կառավարության 18.05.2006 թվականի 912-Ն որոշման 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.12.2008 թվականի 1563-Ն որոշման պահանջներով՝ **որոշում եմ.**

1. «Տիգրան և Վահե» ՍՊԸ-ի տնօրեն Վալերի Ժամհարյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք նվազագույն աշխատավարձի երկու հազար հինգ հարյուրապատիկի չափով:
2. Հանձնարարել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնին՝ ««Սևան» Ազգային պարկ» ՊՈԱԿ-ի ու հասարակական կարգի պահպանության ծառայության օժանդակությամբ ապամոնտաժել «Տիգրան և Վահե» ՍՊԸ-ին կառուցապատման իրավունքով տրամադրված հողատարածքում առկա ինքնակամ շինությունները:
3. Առաջարկել ՀՀ ՆԳՆ Ոստիկանության համայնքային գլխավոր վարչության Սևանի ներքին գործերի բաժնի պետին՝ ապահովել հասարակական կարգի պահպանությունը վարչական հարկադրանքի կիրառման ժամանակ:
4. Սույն որոշման 1-ին կետի պահանջները չկատարելու դեպքում հարցը լուծել օրենքով սահմանված դատական կարգով:
5. Սույն որոշումը կարող է վերադասության կարգով բողոքարկվել Սևան համայնքի ղեկավարին 15 օրվա ընթացքում կամ ՀՀ վարչական դատարան՝ 2 ամսվա ընթացքում:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2050-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Արամ Մկրտչյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Արամ Մկրտչյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան Նաիրյան փողոց 137 / 1-1 հասցեում գտնվող հողատարածքում գոյություն ունեցող տաղավարի քանդման և վարսավիրանոցի կառուցման համար:
2. Արամ Մկրտչյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Արամ Մկրտչյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 12
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2051-Ա

**«ԹՐԻ ՄԻՐՄԵՅԴ ԲԻԶ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ
ՀԱՄԱՋԱՍՊ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ
ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետի, «Վարչական հիմունքների և Վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 49-րդ հոդվածի 1-ին կետի գ) ենթակետի և 2-րդ կետի ա) ենթակետի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Կասեցնել «Թիր Միրմեյդ Բիշ» ՍՊԸ-ի տնօրեն Համազասպ Գրիգորյանի նկատմամբ հարուցված վարչական վարույթը:
2. Վարույթը վերսկսել կասեցման հիմք դարձած հանգամանքների վերանալուց հետո:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 12
ք. Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2052-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 1689-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 3-ի «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1689-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 12
ք. Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2053-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 6-Ի
N 1692-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի հուլիսի 6-ի «Հողհատկացման հիմքերը վերականգնելու մասին» N 1692-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 12
ք. Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2054-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հոդային օրենսգրքի 3-րդ հոդվածով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, հիմք ընդունելով քաղ. Ադիբեկ Վանիկի Մարտիրոսյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Շինարարների փողոց թիվ 2 հասցեի հյուսիսային մասում, ավտոտնակների շարքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, ինքնակամ կառուցված 27.31 քմ մակերեսով ավտոտնակը և 16.52 քմ մակերեսով նկուղն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հոդային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ադիբեկ Մարտիրոսյանի կողմից՝ Սևան համայնք, ք. Սևան, Շինարարների փողոց թիվ 2 հասցեի հյուսիսային մասում, ավտոտնակների շարքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, ինքնակամ կառուցված 27.31 քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 24.17 քմ/, 16.52 քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 12.42/ և զբաղեցրած 27.31 քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, գործառնական նշանակությունը համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոոեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտնորման հատակագծին՝ բնակավայրերի՝ նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման՝ գործառնական նշանակության:
2. Ադիբեկ Մարտիրոսյանի կողմից ինքնակամ կառուցված 27.31 քմ մակերեսով ավտոտնակը և 16.52 քմ մակերեսով նկուղը ճանաչել օրինական /հաշվառման

տեղեկանք՝ 2026MCVXXE/ տրամադրելով Սևան համայնք ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 47 / 36 ավտոտնակ հասցե:

3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերի ամբողջ գումարը քաղաքացու կողմից Սևան համայնքի բյուջե վերականգնելուց հետո:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 12
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2055-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. N 731-Ն որոշմամբ, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 18-րդ կետերով և 11-րդ կետի գ) ենթակետով, հիմք ընդունելով Շահեն Սարգսի Վարդանյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 9-րդ փողոց թիվ 2 տնամերձ հասցեում գտնվող 0.14 հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից ինքնական կատարված շինարարական աշխատանքներն օրինականացնելու մասին, հաշվի առնելով, որ շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 9-րդ փողոց թիվ 2 տնամերձ հասցեում գտնվող 0.14 հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից 2014թ. ինքնական կառուցված 59.82 քմ մակերեսով բնակելի տան /ներքին մակերեսը՝ 48.06քմ/, 1.17 քմ մակերեսով աստիճանահարթակի, 2018թ. ինքնական կառուցված 54.58 քմ մակերեսով ավտոտնակի /ներքին մակերեսը՝ 45.54 քմ/, 12.62 քմ մակերեսով ծածկերի, 11.69 քմ մակերեսով անասնաշենքի, 3.15 քմ մակերեսով նկուղի /ներքին մակերեսը՝ 2.46 քմ/ կառուցման աշխատանքները ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2026R9UULE/ համայնքի բյուջե մուծելով յուրաքանչյուր օրինականացվող 1քմ շինության համար՝ 1028 դրամ:
2. Շահեն Վարդանյանին պատկանող՝ Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 9-րդ փողոց, 2 տնամերձ հասցեում գտնվող 0.14 հա մակերեսով հողատարածքում սեփականատիրոջ կողմից ինքնական կառուցված 7.35 քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը 5.27 քմ/, 69.93 քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝ 62.47 քմ/, 10.10 քմ մակերեսով ծածկը ճանաչել ինքնական:
3. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 12
ք.Սևան



2235



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2056-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 53-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14³ հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոոեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագիծը՝ **որոշում են.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.02147հա մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն, համապատասխանեցնել ՀՀ համայնքների «բնակավայրերի» քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N2-6 եզրակացությամբ հաստատված Գեղարքունիք-1 միկրոոեգիոնալ փաստաթղթերի փաթեթում առկա գոտևորման հատակագծին, տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Խ. Աբովյան փողոց թիվ 11 / 14 հողամաս հասցե:
2. Պետական գրանցման ծախսերն իրականացվում են՝ համաձայն Սևան համայնքի ղեկավարի՝ 05. 01. 2026թ. N 2-Ա որոշման 1-ին կետի:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 12
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2057-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, 10.06.2008. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Անժիկ Հարությունյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող 1770քմ մակերեսով հողատարածքում մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի՝ Անժիկ Բեկի Հարությունյանին /ծնված՝ 17.05.1958թ./ պատկանող, անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված 1770քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 2.2քմ մակերեսով հողատարածքը ճանաչել Անժիկ Հարությունյանի սեփականության իրավունքը:
2. Անժիկ Հարությունյանին պատկանող 1772.2քմ մակերեսով հողատարածքում 1968թ. կառուցված 97.30քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 59.58քմ/, 4.76քմ մակերեսով աստիճանահարթակը ճանաչել Անժիկ Հարությունյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Լճաշեն 2-րդ փողոց 2-րդ նրբանցք թիվ 1 /1 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 12
ք.Սևան





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.ghgharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2059-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՄԱՅԻՍԻ 7-Ի N 1084-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի մայիսի 7-ի «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու և համայնքային սեփականություն ճանաչելու մասին» 1084-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - 1) «գրադեցրած 37քմ մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «գրադեցրած 24քմ մակերեսով» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ



2026 թվականի օգոստոսի 12
ք.Սևան



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2060-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴԻԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Անդրանիկ Կարապետյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, Նորաշեն համայնք, 8-րդ փողոց, 2 հասցեում գտնվող անշարժ գույքը /կադաստրային ծածկագիր՝ 05-070-0010-0004/ առանձնացնելու և առանձնացված հատվածների համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Նորաշեն համայնք, 8-րդ փողոց, 2 հասցեում գտնվող 0.254 հա մակերեսով անշարժ գույքը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 2 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝
 - 1) առաջին միավոր գույքի՝ 0.165 հա մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Նորաշեն, 8-րդ փողոց թիվ 12 բնակելի տուն հասցե;
 - 2) երկրորդ միավոր գույքի՝ 0.089 հա մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Նորաշեն, 8-րդ փողոց թիվ 14 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 12
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2061-Ա

**ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 2026 ԹՎԱԿԱՆԻ
ՕԳՈՍՏՈՍԻ 3-Ի N 1980-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 2026 թվականի օգոստոսի 3-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի տնօրինման մասին» N 1980-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
 - 1) որոշման 1-ին կետում՝ «23.59քմ մակերեսով նկուղը՝ 1քմ՝ 3346 դրամ» բառերի փոխարեն կարդալ «23.59քմ մակերեսով նկուղը՝ 1քմ՝ 3938 դրամ» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



2026 թվականի օգոստոսի 12
ք.Սևան



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.ghgharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2062-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24)-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Սպարտակ Մարգարյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, գ. Վարսեր, առանձնատուն հասցեում գտնվող անշարժ գույքը /վկայականի համար՝ 1153277, տրված՝ 31.08.2005թ. / առանձնացնելու և առանձնացված հատվածների համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Վարսեր, առանձնատուն հասցեում գտնվող 0.283 հա մակերեսով անշարժ գույքը համաձայն ներկայացվող հատակագծերի բաժանել 3 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝
 - 1) առաջին միավոր գույքի՝ 0.17273 հա մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց, 7-րդ նրբանցք թիվ 8 բնակելի տուն հասցե;
 - 2) երկրորդ միավոր գույքի՝ 0.00922 հա մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց, 7-րդ նրբանցք թիվ 8 / 1 շինություն հասցե;
 - 3) երրորդ միավոր գույքի՝ 0.1 հա մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց, 7-րդ նրբանցք թիվ 8 / 2 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում օրենքով սահմանված կարգով պատշաճ իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2026 թվականի օգոստոսի 12
ք.Սևան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.ghgharkunik@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

12 օգոստոսի 2026 թվականի թիվ 2063-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Սամվել Հովհաննիսյանի դիմումը՝ **որոշում եմ.**

